ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՎԵՃԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

idcarmenia@gmail.com
http://www.idcarmenia.am

Ապրիլի 2, 2025թ.

Կարծիք
Էդգար Ղազարյանի դեմ հարուցված քրեական գործի և կիրառված արգելանքի միջոցի մասին

Փաստերը

Քաղաքական գործիչ Էդգար Ղազարյանին առաջադրվել է մեղադրանք Քրեական օրենսգրքի 490-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով: Ըստ «Datalex.am» կայքում հրապարակված տեղեկությունների՝ նրան մեղսագրվում է այն, որ 2024 թվականի օգոստոսի 28-ից մինչև 2024 թվականի հոկտեմբերի 9-ն ընկած ժամանակահատվածում հրապարակայնորեն կատարել է Սահմանադրական դատարանի դատավորներին արատավորող, նրանց իրավունքներին ու օրինական շահերին վնաս պատճառող արտահայտություններ: Մասնավորապես, դատարանի համար որպես փաստական հիմք է ծառայել Էդգար Ղազարյանի՝ Սահմանադրական դատարանի դատավորների հասցեին հնչեցրած քննադատությունը ՍԴՈ-1749 որոշումը կայացնելու առնչությամբ: Այդ որոշումն ընդունվել է 2024 թվականի սեպտեմբերի 26-ին և վերաբերում է «Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև պետական սահմանի սահմանազատման և սահմանային անվտանգության հարցերով հանձնաժողովի ու Ադրբեջանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև պետական սահմանի սահմանազատման պետական հանձնաժողովի համատեղ գործունեության մասին» կանոնակարգում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանելուն:

Քրեական գործի քննության ընթացքում Էդգար Ղազարյանի նկատմամբ կիրառվել է խափանման միջոց՝ երկրից չբացակայելու արգելք: 2025 թվականի փետրվարի 21-ին հավելվել է ևս մեկ խափանման միջոց՝ վարչական հսկողություն, ըստ որի արգելվել է մեղադրյալի կողմից Քրեական օրենսգրքի 490-րդ հոդվածի սուբյեկտների՝ դատավորների, հարկադիր կատարողների, դատախազների, քննիչների, փաստաբանների և նրանց ազգականների վերաբերյալ հանրային կերպով արատավոր տեղեկություններ հայտնել:

2025 թվականի մարտի 4-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի ընդհանուր իրավասության դատարան: Առաջին դատական

նիստը նշանակվել է 2025 թվականի մարտի 24-ին, որի ժամանակ պաշտպանները վիճարկել են խափանման միջոցների օրինականությունը, սակայն դատարանը դրանք թողել է անփոփոխ։ Վարչական հսկողության որևէ ժամկետ չի սահմանվել։ Քրեական գործի քննությունը շարունակվում է։

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ

Էդգար Ղազարյանը հասարակական-քաղաքական գործիչ է, որի նկատմամբ քրեական գործ է հարուցվել նրա հրապարակային հայտարարությունների հիմքով։ Դրանք հանրությանը տեղեկություններ ու գաղափարներ հաղորդելու նպատակ են ունեցել, և Էդգար Ղազարյանը իրացրել է արտահայտվելու ազատության իր իրավունքը։ Այստեղ առկա է տեղեկատվական վեճ, հետևաբար՝ դրա վերաբերյալ փորձագիտական վերլուծություն իրականացնելն ու կարծիք հայտնելը Խորհրդի մասնագիտական գործունեության շրջանակում է։

Քանի որ քրեական գործի նյութերը հասանելի չեն Խորհրդին, դատական քննությունը դեռ սկզբնական փուլում է, և շատ տվյալներ չեն հրապարակվում նախաքննական գաղտնիք լինելու պատճառով, Խորհուրդը ձեռնպահ է մնում այդ գործի հիմքերին անդրադառնալուց, սակայն գտնում է, որ առկա նյութերը թույլ են տալիս կարծիք արտահայտել խափանման միջոցի մասին՝ այնքանով, որքանով խնդրո առարկա հարցը վերաբերում է խոսքի ազատությանը։

Անձի նկատմամբ այնպիսի խափանման միջոց կիրառելը, որով նրան արգելվում է դատավորների վերաբերյալ հրապարակային քննադատությամբ հանդես գալ, արտահայտվելու ազատության իրավունքի միջամտություն է։ Այս մոտեցումը բազմիցս սահմանվել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային որոշումներում (մասնավորապես՝ *Օբուխովան ընդդեմ Ռուսաստանի*, թիվ 34736/03, 08/01/2009, կետ 20)։

Դատարանների, դատավորների նկատմամբ հրապարակային քննադատական խոսքը Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի՝ կարծիք արտահայտելու ազատության առարկան է։ Ըստ Եվրոպական դատարանի՝ դատավորները, հանդիսանալով պետության մի հիմնարար ինստիտուտի (դատական իշխանության) բաղկացուցիչ մաս, կարող են հավասարապես ենթակա լինել անձնական քննադատության՝ ու ոչ միայն տեսական կամ ընդհանրական եղանակով։ Ավելին, իրենց պաշտոնեական կարգավիճակում գործելիս նրանք կարող են նույնիսկ ենթակա լինել թույլատրելի քննադատության առավել լայն շրջանակի, քան սովորական քաղաքացիները (*Մորիսն ընդդեմ Ֆրանսիայի*, թիվ 29369/10, ՄԻԵԴ, 23/04/2015, կետ 131)։ Հետևաբար, Էդգար Ղազարյանի նկատմամբ գործում են Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի, ՀՀ սահմանադրության 42-րդ հոդվածի՝ ազատ խոսքի պաշտպանության բոլոր սկզբունքները։

Այդ սկզբունքները երեքն են. արտահայտվելու ազատությունը սահմանափակող ցանկացած միջոց պետք է լինի օրենքով սահմանված, հետապնդի իրավաչափ նպատակ, անհրաժեշտ լինի ժողովրդավարական հասարակությունում: Սրանք Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայից ներմուծված պահանջներ են, լայնորեն կիրառվում են նաև Հայաստանում, և սկսած 2011 թվականից դատական պրակտիկայում ձեռք են բերել որոշակիություն, ամբողջականություն ու կայունություն՝ հատկապես քաղաքական խոսույթին վերաբերող իրավական գործընթացներում: Թեև այս պրակտիկան զարգացել է հիմնականում քաղաքացիական դատավարության շրջանակներում, սակայն քրեական գործերով նույնպես կայացվել են դատական ակտեր, որոնցում դատարանները առաջադրված մեղադրանքը դիտարկել են Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի լույսի ներքո՝ սադրող, անհանգստություն պատճառող խոսքը համադրելով դրա հասարակական նշանակության, ժողովրդավարական հասարակությունում քաղաքական խոսքի կարևորության հետ:[1]

Նախ ավելի մանրամասն անդրադառնանք օրինականության սկզբունքին: Այն ենթադրում է, որ ցանկացած միջամտող գործողություն ոչ միայն պետք է ունենա օրենքով սահմանված հիմք, այլև օրենքն ինքնին պետք է բավարարի որոշակիության ու կանխատեսելիության որակական պահանջին: Տվյալ դեպքում Քրեական օրենսգրքի 490-րդ հոդվածի *«արատավորող»* կամ *«իրավունքներին ու օրինական շահերին այլ վնաս պատճառող»* արտահայտությունները չունեն բավարար որոշակիություն, որպեսզի ապահովեն կանխատեսելիություն առ այն, թե որ արարքները կհանգեցնեն քրեական պատասխանատվության, իսկ որոնք՝ քաղաքացիական: Չէ՞ որ վերոնշյալ ձևակերպումներով են որակվում նաև այնպիսի հրապարակային, քննադատական խոսքերը, որոնք հանգեցնում են քաղաքացիական պատասխանատվության Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի հիմքով:[2] Այդ առումով մինչ այժմ քաղաքացիական գործերով դատարանները կայացրել են բազմաթիվ ակտեր, իսկ ՀՀ վճռաբեկ դատարանը զարգացրել է մոտ մեկ տասնյակ որոշումներից բաղկացած նախադեպային իրավունք: Անորոշ է նաև, թե կոնկրետ ո՞ր արարքները քրեաիրավական իմաստով կարող են համարվել «այլ վնաս պատճառող», և թե արդյո՞ք ցանկացած քննադատություն հետագայում դատարանի կողմից չի համարվի այդ անձանց իրավունքներին ու օրինական շահերին վնաս պատճառող խոսք՝ պատճառ հանդիսանալով խափանման միջոցի խախտում արձանագրելու համար՝ սրա ողջ բացասական հետևանքով: Այսպիսով, Էդգար Ղազարյանի արտահայտվելու ազատության իրավունքը սահմանափակելու խափանման միջոցի կիրառման մասին որոշումը չի ապահովում բավարար որոշակիություն և, հետևաբար, չի բավարարում օրինականության պահանջին:

Խնդրահարույց է նաև սահմանափակման համաչափությունը: Էդգար Ղազարյանի նկատմամբ կիրառված խափանման միջոցով արգելվել է նրան տարածել Քրեական օրենսգրքի 490-րդ հոդվածի ողջ դիսպոզիցիայով սահմանված խոսք՝ այդ թվում դատախազի, քննիչի, քննչական մարմնի ղեկավարի, հետաքննության մարմնի, փաստաբանի, ներկայացուցչի, փորձագետի, հարկադիր կատարողի և նրանց ազգականների վերաբերյալ, թեև քրեական գործը հարուցվել է Սահմանադրակա՛ն դատարանի դատավորներին ուղղված քննադատական արտահայտությունների

համար։ Եվրոպական դատարանը, նման գործերի առնչությամբ, մեկնաբանելով Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասի «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում» հասկացությունը, նշում է, որ խափանման միջոցը ոչ միայն պետք է հետապնդի իրավաչափ նպատակ, այլև՝ որ *«պաշտպանված իրավունքների միջամտությունը ավելին չլինի, քան՝ անհրաժեշտ այդ իրավաչափ նպատակը պաշտպանելու համար»* (*Օբուխովան ընդդեմ Ռուսաստանի*, կետ 24)։ Մինչդեռ, տվյալ դեպքում, թեև քրեական գործը քննվում է Սահմանադրական դատարանի դատավորների վերաբերյալ հրապարակային հայտարարությունների հիմքով, խափանման միջոցն ընդգրկում է անձանց շատ ավելի լայն շրջանակ, քան անհրաժեշտ է, և, հետևաբար, այդ միջոցն անհամաչափ է։

Վերոհիշյալ խնդիրներն ուղիղ տրամաբանական կապ ունեն նաև հենց **Քրեական օրենսգրքի 490-րդ հոդվածի** հետ, որը, Խորհրդի համոզմամբ, **ընդհանրապես պետք է հեռացվի այդ օրենսգրքից**, իսկ հրապարակային հայտարարություններից արդարադատության հեղինակության իրավական պաշտպանությունը դիտարկվի բացառապես քաղաքացիաիրավական հարաբերությունների տիրույթում։[3] Քանի դեռ արտահայտած միտքը չի պարունակում ատելության խոսք, բռնության կոչ, թշնամության հրահրում և այլ նմանատիպ բովանդակություն, ցանկացած քննադատություն, այդ թվում արդարադատության հասցեին, նույնիսկ եթե այն սուր է և կոշտ բառապաշարով, գտնվում է արտահայտման ազատության պաշտպանության տակ, իսկ այդ պայմաններում քրեաիրավական մեխանիզմների կիրառումը անհամաչափ է, վտանգում է ազատ խոսքի իրավունքը, կարևոր փաստերի, իրադարձությունների և երևույթների վերաբերյալ անկաշկանդ հանրային բանավեճը, հետևաբար՝ անհրաժեշտ չէ ժողովրդավարական հասարակությունում։

Եթե, այդուհանդերձ, 490-րդ հոդվածն օբյեկտիվորեն անհրաժեշտ է արդարադատության շահերի դեմ ուղղված հանցագործությունների կանխման նպատակով, Խորհուրդն առաջարկում է բարեփոխել այդ հոդվածը, հստակեցնել դրա քրեաիրավական բովանդակությունը, ձերբազատվել անորոշ արտահայտություններից (ինչպիսին է, օրինակ, *«իրավունքներին ու օրինական շահերին այլ վնաս պատճառող տեղեկություն»* ձևակերպումը), ինչպես նաև հստակեցնել, թե «արատավորող» եզրույթի քրեաիրավական բովանդակությունը ինչով է տարբերվում նույն եզրույթի քաղաքացիաիրավական բովանդակությունից՝ Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի իմաստով, որը քաղաքացիական գործերով շարունակաբար մեկնաբանվել է դատարանների կողմից 2012 թվականից ի վեր։

Անկասկած, դատավորները և դատախազները նույնպես կարիք ունեն իրավական պաշտպանության, ու այդ առումով նրանց նկատմամբ թույլատրելի քննադատության շրջանակներն ավելի նեղ են, քան քաղաքական գործիչների ու պաշտոնատար անձանց դեպքում։ Դա պայմանավորված է նրանով, որ արդարադատության ոլորտի ներկայացուցիչները շատ ավելի քիչ հնարավորություններ ունեն արձագանքելու իրենց հասցեագրված քննադատական խոսքին, քան հասարակության այլ խմբեր։ Սակայն դատավորները և դատախազները չպետք է անձեռնմխելի լինեն հանրային քննադատության առումով, չպետք է գտնվեն օրենքի հատուկ պաշտպանության

տակ, և նրանց վերաբերյալ հրապարակային քննադատական խոսքը չպետք է հանգեցնի քրեական պատասխանատվության, **եթե այդ խոսքն ունի հանրային նշանակություն, արտահայտվել է հանրային շահի հետապնդմամբ:**

[1] Տե՛ս, օրինակ, Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի արդարացման դատավճիռը Արամ Հարությունյանի վերաբերյալ ԵԴ/0323/01/21 քրեական գործով:

[2] Տե՛ս, օրինակ, «արատավորող» եզրի մեկնաբանությունը Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի վիրավորանք կամ զրպարտություն հասկացության ներքո Վճռաբեկ դատարանի թիվ ԼԴ/0749/02/10 քաղաքացիական գործով որոշման մեջ. էջ 10:

[3] Պատահական չէ, որ դեռ 2017 թվականին Եվրոպայի խորհրդի փորձագետները առաջարկել են Քրեական օրենսգրքի նախագծից հեռացնել 490-րդ հոդվածի նախկին տարբերակը, որը ձևակերպված է եղել գրեթե նույն սահմանումներով: Տե՛ս Opinion of the Directorate General Human Rights and Rule of Law of the Council of Europe on the Draft Criminal Code of the Republic of Armenia. Prepared on the basis of the comments by Jeremy McBride and John Wadham. September 2017. Էջ 37:

Տեղեկատվական վեճերի խորհուրդ

Շուշան Դոյդոյան (Խորհրդի քարտուղար) - Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախագահ

Արա Ղազարյան - «Արա Ղազարյան» իրավաբանական գրասենյակի տնօրեն

Բորիս Նավասարդյան - Երևանի մամուլի ակումբի նախագահ

Արամ Աբրահամյան - «Առավոտ» օրաթերթի գլխավոր խմբագիր

Աշոտ Մելիքյան - Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի նախագահ

Օլգա Սաֆարյան - Փաստաբան